Լրամշակված նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-719-01.09.2020,04.09.2020-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍԱՆԻՏԱՐԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» 1992 թվականի նոյեմբերի 16-ի ՀՕ-43 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածում «լիազոր մարմինն» բառերից հետո լրացնել «(այսուհետ նաև՝ լիազոր մարմին)» բառերը:

Հոդված 2. Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 4-րդ կետից հանել «զանգվածային» բառը, «վարակիչ հիվանդությունների» բառերից հետո լրացնել «բռնկումների,» բառը.

2) 5-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

3) 6-րդ կետից հետո լրացնել նոր 7-րդ կետ.

«7) օրենքով սահմանված դեպքերում իրականացնում են այլ լիազորություններ:»:

Հոդված 3. Օրենքում լրացնել նոր 20.1-20.12-րդ հոդվածներ.

«Հոդված 20.1. Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ընդհանուր պահանջները վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների, թունավորումների կանխարգելման բնագավառում

1. Վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների, թունավորումների դեպքերը ենթակա են հաշվառման և հաղորդման բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների կողմից: Հաղորդման և հաշվառման ենթակա վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների և թունավորումների ցանկը հաստատվում է լիազոր մարմնի ղեկավարի սահմանած սանիտարական կանոնների համաձայն: Հաղորդման և հաշվառման ենթակա վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների և թունավորումների դեպքերի հաշվառումը և հաղորդումն իրականացվում են լիազոր մարմնի ղեկավարի սահմանած սանիտարական կանոնների համաձայն:

2. Մարդու (հանրության) առողջության վրա շրջակա միջավայրի գործոնների՝ վնասակար ազդեցության նվազեցման, դրանց կանխարգելման, բացառման, ինչպես նաև վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների առաջացման և տարածման, կանխման ու վերացման նպատակով, առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը, տեսչական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները իրենց իրավասությունների շրջանակներում և բժշկական օգնություն ու սպասարկում իրականացնող կազմակերպությունները սանիտարական կանոններին համապատասխան սույն օրենքի 6-10-րդ, 24-րդ հոդվածներով և այլ օրենքներով սահմանված կարգով իրականացնում են հետևյալ կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումները՝

1) բժշկական փաստաթղթերի, ներառյալ՝ բժշկական զննություն կամ լաբորատոր հետազոտություն հավաստող կամ կանխարգելիչ այլ միջոցառումներ հավաստող փաստաթղթերի ուսումնասիրություն.

2) լիազոր մարմնի որոշմամբ սահմանված վարակիչ հիվանդությունների տեսակետից անբարենպաստ երկրներ կամ վարակի օջախ հանդիսացող վայրեր ուղևորությունների պատմության ուսումնասիրություն.

3) բժշկական զննության իրականացում.

4) ախտահանում, միջատազերծում, կրծողազերծում.

5) վարակիչ հիվանդությունների՝ լիազոր մարմնի ղեկավարի կողմից սահմանված ախտանիշներին կամ առողջական վիճակին համապատասխանող անձանց (այսուհետ՝ հնարավոր վարակակիր), տվյալ վարակիչ հիվանդության ինկուբացիոն շրջանի ժամանակահատվածում վարակակրի հետ շփված անձանց (այսուհետ՝ կոնտակտավոր անձինք), ինչպես նաև վարակիչ հիվանդությունների հարուցիչներ կրողների բժշկական զննություն կամ բժշկական օգնություն և սպասարկում, այդ թվում՝ իմունականխարգելման իրականացում կամ հոսպիտալացում.

6) լիազոր մարմնի որոշմամբ սահմանված վարակիչ հիվանդությունների տեսակետից անբարենպաստ երկրներից Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործող կամ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող վարակիչ հիվանդության կասկածով անձանց հայտնաբերելիս բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպության, պետական սահմանի անցման կետերում պետական վերահսկողություն իրականացնող մարմինների, դեպքն արձանագրող այլ անձանց կամ մարմինների կողմից, սանիտարական կանոններին համապատասխան, տեղեկացվում է լիազոր մարմնին՝ ապահովելով այդ անձանց ժամանակավոր մեկուսացումը, անհրաժեշտության դեպքում՝ հոսպիտալացումը.

7) հնարավոր վարակակիր, ինչպես նաև վարակիչ հիվանդությունների հարուցիչներ կրող անձանց, կոնտակտավորների նկատմամբ բժշկական հսկողության սահմանում.

8) հնարավոր վարակակիր, ինչպես նաև վարակիչ հիվանդությունների հարուցիչներ կրող անձանց, կոնտակտավորների շփումների ուսումնասիրությանն ուղղված միջոցառումների ձեռնարկում.

9) անհատական պաշտպանության միջոցների պարտադիր օգտագործում:

3. Սույն հոդվածով նախատեսված անհատական պաշտպանության միջոցների ցանկը, դրանց կիրառման դեպքերն ու կարգը, ինչպես նաև սանիտարահամաճարակային անվտանգության կանոնները սահմանվում են առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարի կողմից՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով:

4. Սույն հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված միջոցառումների ենթակա անձը տեղեկացվում է այն ախտանիշների մասին, որոնց առկայության հիմքով կատարվում է համապատասխան միջոցառումը, իսկ հոսպիտալացման դեպքում նաև այն վայրի մասին, որտեղ կատարվելու է հոսպիտալացումը: Անձի պահանջով հոսպիտալացում իրականացնողը պարտավոր է այդ մասին անհապաղ տեղեկացնել նրա ընտրած անձին:

5. Անձի՝ սույն հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված միջոցառումներից (բացառությամբ իմունականխարգելման) հրաժարվելու դեպքում դրանք իրականացվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

6. Սույն հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով սահմանված դեպքերում ժամանակավոր մեկուսացման նկատմամբ ենթակա են կիրառման սույն օրենքի 20.8-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված երաշխիքները:

7. Վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների, թունավորումների առաջացման և տարածման, կանխման ու վերացման նպատակով զինված ուժերի, ոստիկանության զորքերի և սահմանապահ զորքերի զորամասերում «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» օրենքով սահմանված սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումները կարող են իրականացվել պաշտպանության բնագավառում պետական լիազոր մարմնի, Ոստիկանության կամ Ազգային անվտանգության ծառայության կողմից:

Հոդված 20.2. Կարանտին սահմանելը

1. Վարակիչ հիվանդությունների՝ Հայաստանի Հանրապետության տարածք ներբերման (ներթափանցման), դրանց ծագման ու տարածման վտանգի, բռնկումների, համաճարակների առաջացման, ինչպես նաև դրանց հետևանքով արտակարգ իրավիճակ առաջանալու դեպքերում կարող է սահմանվել կարանտին:

2. Կարանտինը վարակիչ հիվանդությունների բռնկումները, համաճարակները տեղայնացնող, վերացնող, վարակի օջախները մեկուսացնող և վարակի հետագա տարածումը, վարակիչ հիվանդությունների ներբերումը (ներթափանցումը) կանխող ռեժիմ է, որը սահմանվում է Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում կամ դրա առանձին տարածքներում (հասցեներում):

3. Կարանտին սահմանելու մասին որոշումը լիազոր մարմնի առաջարկությամբ կայացնում է՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում կամ պետական սահմանի անցման կետում կամ համաճարակի (կարանտինային) գոտին երկու կամ ավելի մարզ (ներառյալ՝ մեկ կամ ավելի մարզեր և Երևան քաղաքը) ներառելու դեպքում, այդ թվում՝ արտակարգ իրավիճակի հիմք հանդիսացող կարանտինի դեպքերում.

2) մարզպետը՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան վարչատարածքային միավորում՝ կամ դրա առանձին տարածքում, այդ թվում տվյալ վարչատարածքային միավորում գտնվող կամ գործունեություն իրականացնող կազմակերպությունների (անկախ սեփականության կամ կազմակերպաիրավական ձևից) գտնվելու կամ գործունեության իրականացման վայրում.

3) Երևանի քաղաքապետը՝ Երևան քաղաքում կամ դրա առանձին տարածքում, այդ թվում Երևան քաղաքում գտնվող կամ գործունեություն իրականացնող կազմակերպությունների (անկախ սեփականության կամ կազմակերպաիրավական ձևից) գտնվելու կամ գործունեության իրականացման վայրում.

4. Կարանտին սահմանելու մասին որոշման մեջ, ի թիվս այլնի, նշվում են՝

1) կարանտին սահմանելու հիմքերը,

2) կարանտինային գոտու (համաճարակի գոտու)՝ վարակի օջախի սահմանները,

3) կարանտին սահմանելու ժամկետը,

4) անհատական պաշտպանության միջոցների օգտագործման պահանջը,

5) անհրաժեշտ կանխարգելիչ, հակահամաճարակային և սահմանափակող միջոցառումների ցանկը, սահմանափակող միջոցառումների կիրառման կարգը, դրանց կիրառման ժամկետը, կազմակերպումն ու իրականացումն ապահովելու համար պատասխանատու մարմինները՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

5. Լիազոր մարմինը, գնահատելով սույն օրենքի 20.1-ին հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով սահմանված կարգով ստացված տեղեկատվությունը, հիվանդության հարուցիչի ախտածնությունը, տարածման առանձնահատկությունները, տարածքի բնական-աշխարհագրական պայմանները՝ հիվանդության արմատավորման տեսակետից, կարանտին սահմանելու և անհրաժեշտ սահմանափակող միջոցառումներ կիրառելու մասին առաջարկություն է ներկայացնում Հայաստանի

Հանրապետության Կառավարություն կամ համապատասխան մարզպետին կամ Երևանի քաղաքապետին:

6. Կարանտին սահմանելու մասին որոշումը կայացվում է համապատասխան առաջարկությունը լիազոր մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարություն կամ համապատասխան մարզպետին կամ Երևանի քաղաքապետին ներկայացնելուց հետո 24 ժամվա ընթացքում: Սահմանված ժամկետում որոշում չկայացվելու դեպքում անձանց ժամանակավոր մեկուսացումը վերացվում է:

Հոդված 20.3. Կարանտին սահմանվելու դեպքում կիրառվող սահմանափակող միջոցառումները

1. Կարանտին սահմանվելու դեպքում, ի թիվս 20.1-ին հոդվածի 2-րդ մասում նշված միջոցառումների, կարող են կիրառվել հետևյալ սահմանափակող միջոցառումները.

1) համաճարակի (կարանտինային) գոտում մուտքի և ելքի հատուկ ռեժիմի սահմանում.

2) «Պետական սահմանի մասին» օրենքի 16-րդ հոդվածով նախատեսված պետական սահմանով հաղորդակցության ժամանակավոր դադարեցում կամ սահմանափակում.

3) անձանց ազատ տեղաշարժվելու իրավունքի և տրանսպորտային միջոցների տեղաշարժման սահմանափակումներ.

4) օբսերվացիա.

5) ինքնամեկուսացում.

6) մեկուսացում:

3. Սույն հոդվածով սահմանված միջոցառումները կիրառվում են վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու, դրանց հետևանքները վերացնելու, անձանց և հանրության առողջության պահպանման նպատակներով և պետք է

համաչափ լինեն այդ նպատակներին: Կարանտին սահմանվելու դեպքում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գործողությունները պետք է համարժեք լինեն կարանտին սահմանելու հիմք հանդիսացած հանգամանքներով պայմանավորված իրավիճակին:

4. Սույն հոդվածով սահմանված միջոցառումների կիրառումը չի կարող խոչընդոտել Ազգային ժողովի, Սահմանադրական դատարանի, դատարանների, Մարդու իրավունքների պաշտպանի, զինված ուժերի, ոստիկանության զորքերի և սահմանապահ զորքերի բնականոն գործունեությունը:

5. Արտակարգ իրավիճակ առաջացնող համաճարակով պայմանավորված կարանտին սահմանվելու դեպքում բնակչության պաշտպանությունը, կիրառվող այլ միջոցառումների ցանկը, այդ միջոցառումների կազմակերպման և իրականացման կարգն ու առանձնահատկությունները սահմանվում են «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքով:

Հոդված 20.4. Համաճարակի գոտում մուտքի և ելքի հատուկ ռեժիմ սահմանելը

1. Կարանտին սահմանելու մասին որոշմամբ մուտքի և ելքի հատուկ ռեժիմ սահմանված լինելու դեպքում հատուկ ռեժիմի իրականացումն ապահովելու համար կարող են տեղադրվել հատուկ անցակետեր և բժշկական զննության իրականացման կետեր:

2. Անցակետերում և բժշկական զննման կետերում անվտանգության և ռեժիմի պահպանությունն ապահովում է Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված անվտանգության և ռեժիմի պահպանությանը կարող են ներգրավվել նաև լիազոր մարմնի ներկայացուցիչները, Տեսչական մարմինը, տեղական ինքնակառավարման մարմինները, Ազգային անվտանգության ծառայությունը և արտակարգ իրավիճակների բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը:

Հոդված 20.5. Անձանց ազատ տեղաշարժվելու իրավունքի և տրանսպորտային միջոցների տեղաշարժման սահմանափակումներ

1. Կարանտին սահմանելու մասին որոշմամբ կարող են կիրառվել անձանց ազատ տեղաշարժվելու իրավունքի և տրանսպորտային միջոցների տեղաշարժման հետևյալ սահմանափակումները.

1) տեղաշարժվելու իրավունքի սահմանափակում որոշակի տարածքի սահմաններում.

2) անհատական պաշտպանության միջոցների առկայություն կամ կիրառություն և սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների պահպանում.

3) բնակության վայրի բնակելի տարածքից դուրս գտնվելիս և տեղաշարժվելիս անձի մոտ անձը հաստատող փաստաթղթի առկայություն.

4) անձնական օգտագործման մարդատար և բեռնատար տրանսպորտային միջոցներում, կանոնավոր և ոչ կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցներում, մարդատար-տաքսի ավտոմոբիլներում, հանրային տրանսպորտում անհատական պաշտպանության միջոցների առկայություն կամ կիրառություն և սանիտարահամաճարակային կանոնների պահպանում, ուղևորների թվաքանակի սահմանափակում, ինչպես նաև սույն կետով սահմանված սահմանափակումների կիրառման նկատմամբ հսկողության նպատակով տրանսպորտային միջոցների զննում:

2. Սույն հոդվածով նախատեսված միջոցառումների կիրառման նկատմամբ հսկողությունն իրականացնում և սահմանափակումների խախտման համար պատասխանատվության միջոցները կիրառում է Ոստիկանությունը:

Հոդված 20.6. Օբսերվացիան

1. Օբսերվացիան բժշկական զննության, համաճարակաբանական դիտարկման, կանխարգելիչ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների համալիր է, որը կիրառվում է որոշակի ժամանակահատվածով վարակիչ հիվանդություններով հիվանդների հետ անմիջական շփված (կոնտակտավոր)՝ մեկուսացված, ինքնամեկուսացված, համաճարակային գոտի մուտք գործող և դուրս եկող, վարակիչ հիվանդությունների տեսակետից անբարենպաստ երկրներից Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործող հիվանդության կասկածով անձանց նկատմամբ:

2. Օբսերվացիայի շրջանակներում անձի՝ բժշկական հետազոտության ենթարկվելուց հրաժարվելու դեպքում, այն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված դատական կարգով:

3. Եթե օբսերվացիայի արդյունքներով անձի մոտ հաստատվում է վարակիչ հիվանդության առկայությունը, ապա նրա նկատմամբ կիրառվում է հոսպիտալացում՝ սույն օրենքով սահմանված դեպքերում և կարգով կամ հրահանգվում է ինքնամեկուսանալ՝ սույն օրենքի 20.7-րդ հոդվածով սահմանված կարգով:

4. Օբսերվացիայի իրականացման կարգի մանրամասները սահմանվում են առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով:

Հոդված 20.7. Ինքնամեկուսացումը

1. Ինքնամեկուսացումը հնարավոր վարակակիր, կոնտակտավոր անձանց, ինչպես նաև վարակիչ հիվանդությունների հարուցիչներ կրողների առանձնացումն է իր մշտական բնակության կամ իր նախընտրությամբ մեկ այլ վայրում՝ որոշակի

ժամանակահատվածում այլ անձանց հետ անմիջական շփումը սահմանափակելու և վարակի տարածումը կանխելու նպատակով:

2. Ինքնամեկուսացման ենթակա յուրաքանչյուր անձ իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է ինքնամեկուսացման պատճառների, բժշկական խորհրդատվության մատչելիության իրավունքի և իր պարտականությունների մասին:

3. Անձի նկատմամբ ինքնամեկուսացումը կիրառվում է՝ սույն օրենքով նախատեսված կարգով: Ինքնամեկուսացման հրահանգը տրվում է առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի կամ Տեսչական մարմնի անունից՝ համապատասխան մարմնի ղեկավարի կողմից լիազորված պաշտոնատար անձի բանավոր կարգադրությամբ, իսկ հասցեատիրոջ բանավոր կամ գրավոր պահանջով ենթակա է գրավոր ձևակերպման ոչ ուշ, քան պահանջն ստանալուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

4. Պաշտպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի, ոստիկանության զորքերի, սահմանապահ զորքերի զինծառայողներին (աշխատակիցներին) ինքնամեկուսացման հրահանգը կարող է տրվել համապատասխանաբար պաշտպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի, Ոստիկանության կամ Ազգային անվտանգության ծառայության անունից՝ նրանց ղեկավարի կողմից լիազորված պաշտոնատար անձանց բանավոր կարգադրությամբ, իսկ հասցեատիրոջ բանավոր կամ գրավոր պահանջով ենթակա է գրավոր ձևակերպման ոչ ուշ, քան պահանջն ստանալուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

5. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ինքնամեկուսացման հրահանգը կարող է կարանտին սահմանելու որոշմամբ սահմանված դեպքերում կիրառվել նաև Հայաստանի Հանրապետություն մուտքի դեպքում:

6. Ոստիկանությունը հսկողություն է իրականացնում ինքնամեկուսացված անձանց տրված հրահանգի պահանջների կատարման նկատմամբ՝ բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի: Ոստիկանությունը, սույն մասով սահմանված գործառույթներն իրականացնելիս անհրաժեշտության դեպքում կարող է դիմել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին: Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերում հսկողությունն իրականացվում է պաշտպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի, Ոստիկանության կամ Ազգային անվտանգության ծառայության կողմից:

Հոդված 20.8. Մեկուսացումը

1. Մեկուսացումը հնարավոր վարակակիր, կոնտակտավոր անձանց, ինչպես նաև վարակիչ հիվանդությունների հարուցիչներ կրողների առանձնացումն է լիազոր մարմնի որոշմամբ նախատեսված վայրում՝ որոշակի ժամանակահատվածով այլ անձանց հետ անմիջական շփումը բացառելու և վարակի տարածումը կանխելու նպատակով:

2. Մեկուսացման ենթակա յուրաքանչյուր անձ իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է մեկուսացման պատճառների, բժշկական խորհրդատվության մատչելիության իրավունքի և իր պարտականությունների մասին: Մեկուսացման ենթարկված անձի պահանջով մեկուսացում կիրառող մարմինը պարտավոր է անձի մեկուսացման մասին անհապաղ տեղեկացնել նրա ընտրած անձին:

3. Մեկուսացման հրահանգը տրվում է առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի կամ Տեսչական մարմնի անունից՝ համապատասխան մարմնի ղեկավարի կողմից լիազորված պաշտոնատար անձի գրավոր հրահանգով:

4. Պաշտպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի, ոստիկանության զորքերի, սահմանապահ զորքերի զինծառայողներին

(աշխատակիցներին) մեկուսացման հրահանգը կարող է տրվել համապատասխանաբար պաշտպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի, Ոստիկանության կամ Ազգային անվտանգության ծառայության անունից՝ նրանց ղեկավարի կողմից լիազորված պաշտոնատար անձանց գրավոր հրահանգով:

5. Ոստիկանությունը հսկողություն է իրականացնում մեկուսացված անձանց տրված հրահանգի պահանջների կատարման նկատմամբ՝ բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի: Ոստիկանությունը, սույն մասով սահմանված գործառույթներն իրականացնելիս անհրաժեշտության դեպքում կարող է դիմել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին: Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերում հսկողությունն իրականացվում է պաշտպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի, Ոստիկանության կամ Ազգային անվտանգության ծառայության կողմից:

6. Անձի նկատմամբ մեկուսացումը կիրառվում է այն դեպքում, երբ անձին հրահանգվել է ինքնամեկուսանալ, սակայն անձը հրաժարվել է կամ երբ անձը խախտել է ինքնամեկուսացման հրահանգով նախատեսված կանոնները, ինչպես նաև սանիտարահամաճարակային անվտանգության նորմերով նախատեսված հիմքերի առկայության դեպքում:

7. Մեկուսացման դեպքում անձը արտակարգ իրավիճակների բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի կամ Հայաստանի Հանրապետության ոստիկանության ներկայացուցչի հսկողությամբ և առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի կամ Տեսչական մարմնի ներկայացուցչի ուղեկցությամբ տեղափոխվում է առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարի կողմից սահմանված մեկուսացման վայր՝ բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի:

8. Մեկուսացման վայրում անձի համար ապահովվում են սննդի, կեցության համար բավարար պայմաններ, բժշկական խորհրդատվություն: Անհրաժեշտության դեպքում՝ մեկուսացված անձի համար ապահովվում է բժշկական օգնություն և սպասարկում ստանալու հնարավորությունը:

9. Պաշտպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի, ոստիկանության զորքերի, սահմանապահ զորքերի զինծառայողների (աշխատակիցների) մեկուսացման դեպքում անձը պաշտպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի, Ոստիկանության կամ Ազգային անվտանգության ծառայության ներկայացուցիչների հսկողությամբ և ուղեկցությամբ տեղափոխվում է համապատասխանաբար պաշտպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարի, Ոստիկանության պետի կամ Ազգային անվտանգության ծառայության տնօրենի կողմից սահմանված մեկուսացման վայրեր:

Հոդված 20.9. Սահմանափակող միջոցառումների կիրառումն ապահովելու նպատակով անձանց տվյալների փոխանցումը

1. Սահմանափակող միջոցառումների կիրառման նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով սահմանափակման ենթակա անձանց կարանտին սահմանելու հիմք հանդիսացող վարակիչ հիվանդության վերաբերյալ տվյալները էլեկտրոնային առողջապահության համակարգի միասնական օպերատորի կողմից փոխանցվում են Տեսչական մարմնին և Ոստիկանությանը:

Հոդված 20.10. Կարանտինի գործողության ժամկետը, երկարաձգումը և կարանտինի դադարումը

1. Կարանտինը սահմանվում է մինչև վեց ամիս ժամկետով:

2. Կարանտին սահմանելու հիմքերը չվերանալու դեպքում այն կարող է երկարաձգվել յուրաքանչյուր անգամ մինչև 6 ամիս ժամկետով՝ պահպանելով կարանտին սահմանելու սույն օրենքով սահմանված կարգը:

3. Կարանտինը դադարում է կարանտին սահմանելու մասին որոշման ժամկետը լրանալով կամ կարանտին սահմանելու մասին որոշման գործողությունը դադարեցվելու դեպքերում:

Հոդված 20.11. Կարանտին սահմանվելու դեպքում բնակչության բժշկական օգնության և սպասարկման կազմակերպումը

1. Կարանտին սահմանվելու դեպքում բժշկական օգնության և սպասարկման լիցենզիա ունեցող կազմակերպությունները (անկախ սեփականության ձևից) բժշկական օգնությունը և սպասարկումը իրականացնում են՝ հիմք ընդունելով լիազոր մարմնի ղեկավարի հրամանները:

Հոդված 20.12. Սույն գլխով նախատեսված ակտերի և գործողությունների (անգործության) բողոքարկումը

1. Կարանտինի պայմաններում սույն գլխով սահմանված միջոցառումների կիրառման շրջանակներում սույն գլխով նախատեսված մարմինների ակտերը ենթակա են անհապաղ կատարման, բացառությամբ կարանտին սահմանելու մասին որոշմամբ կիրառվող միջոցառումների խախտման դեպքում կայացված ակտերի: :

2. Կարանտինի պայմաններում սույն գլխով սահմանված միջոցառումների կիրառման շրջանակներում սույն գլխով նախատեսված մարմինների ակտերը, գործողությունները (անգործությունը) կարող են բողոքարկվել վարչական կարգով կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով: Սույն մասով նախատեսված բողոքարկումը չի կասեցնում համապատասխան ակտի կատարումը,

բացառությամբ կարանտին սահմանելու մասին որոշմամբ կիրառվող միջոցառումների խախտման դեպքում կայացված ակտերի:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից հետո՝ անմիջապես:

~~ԼՐԱՄՇԱԿՎԱԾ~~

~~ՆԱԽԱԳԻԾ~~

Լրամշակված նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-719-01.09.2020,04.09.2020-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍԱՆԻՏԱՐԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ~~ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ~~ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» 1992 թվականի նոյեմբերի 16-ի ՀՕ-43 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածում «լիազոր մարմինն» բառերից հետո լրացնել «(այսուհետ նաև՝ լիազոր մարմին)» բառերը:

Հոդված 2. Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 4-րդ կետից հանել «զանգվածային» բառը, «վարակիչ հիվանդությունների» բառերից հետո լրացնել «բռնկումների,» բառը.

2) 5-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

3) 6-րդ կետից հետո լրացնել նոր 7-րդ կետ.

«7) օրենքով սահմանված դեպքերում իրականացնում են այլ լիազորություններ:»:

Հոդված 3. Օրենքում լրացնել նոր 20.1-20.12-րդ հոդվածներ.

«Հոդված 20.1. Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ընդհանուր պահանջները վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների, թունավորումների կանխարգելման բնագավառում

1. Վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների, թունավորումների դեպքերը ենթակա են հաշվառման և հաղորդման բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների կողմից: Հաղորդման և հաշվառման ենթակա վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների և թունավորումների ցանկը հաստատվում է լիազոր մարմնի ղեկավարի սահմանած սանիտարական կանոնների համաձայն: Հաղորդման և հաշվառման ենթակա վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների և թունավորումների դեպքերի հաշվառումը և հաղորդումն իրականացվում են լիազոր մարմնի ղեկավարի սահմանած սանիտարական կանոնների համաձայն:

2. Մարդու (հանրության) առողջության վրա շրջակա միջավայրի գործոնների՝ վնասակար ազդեցության նվազեցման, դրանց կանխարգելման, բացառման, ինչպես նաև վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների առաջացման և տարածման, կանխման ու վերացման նպատակով, առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը, տեսչական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները ——— իրենց իրավասությունների շրջանակներում և բժշկական օգնություն ու սպասարկում իրականացնող կազմակերպությունները սանիտարական կանոններին համապատասխան սույն օրենքի 6-10-րդ, 24-րդ հոդվածներով և այլ օրենքներով

սահմանված կարգով իրականացնում են հետևյալ կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումները՝

1) բժշկական փաստաթղթերի, ներառյալ՝ բժշկական զննություն կամ լաբորատոր հետազոտություն հավաստող կամ կանխարգելիչ այլ միջոցառումներ հավաստող փաստաթղթերի ուսումնասիրություն.

2) լիազոր մարմնի որոշմամբ սահմանված վարակիչ հիվանդությունների տեսակետից ~~անապահով~~անբարենպաստ երկրներ կամ վարակի օջախ հանդիսացող վայրեր ուղևորությունների պատմության ուսումնասիրություն.

3) բժշկական զննության իրականացում.

4) ախտահանում, միջատազերծում, կրծողազերծում.

5) վարակիչ հիվանդությունների՝ լիազոր մարմնի ղեկավարի կողմից սահմանված ախտանիշներին կամ առողջական վիճակին համապատասխանող անձանց (այսուհետ՝ ~~կասկածելի անձինք), վարակիչ հիվանդություններով հիվանդներիհ~~նարավոր վարակակիր), տվյալ վարակիչ հիվանդության ինկուբացիոն շրջանի ժամանակահատվածում վարակակրի հետ շփված անձանց (այսուհետ՝ կոնտակտավոր անձինք), ինչպես նաև վարակիչ հիվանդությունների հարուցիչներ կրողների բժշկական զննություն կամ բժշկական օգնություն և սպասարկում, այդ թվում՝ իմունականխարգելման իրականացում կամ հոսպիտալացում.

6) լիազոր մարմնի որոշմամբ սահմանված վարակիչ հիվանդությունների տեսակետից ~~անապահով~~անբարենպաստ երկրներից Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործող կամ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող վարակիչ հիվանդության կասկածով անձանց հայտնաբերելիս բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպության, պետական սահմանի անցման կետերում պետական վերահսկողություն իրականացնող մարմինների, դեպքն արձանագրող այլ անձանց կամ մարմինների կողմից, սանիտարական կանոններին համապատասխան, տեղեկացվում է լիազոր

մարմնին՝ ապահովելով այդ անձանց ժամանակավոր մեկուսացումը, անհրաժեշտության դեպքում՝ հոսպիտալացումը.

7) ~~կասկածելի~~հնարավոր վարակակիր, ինչպես նաև վարակիչ հիվանդությունների հարուցիչներ կրող անձանց, կոնտակտավորների նկատմամբ բժշկական հսկողության սահմանում.

8) ~~կասկածելի անձանց~~հնարավոր վարակակիր, ինչպես նաև վարակիչ հիվանդությունների հարուցիչներ կրող անձանց, կոնտակտավորների շփումների ուսումնասիրությանն ուղղված միջոցառումների ձեռնարկում.

9) անհատական պաշտպանության միջոցների պարտադիր օգտագործում:

3. Սույն հոդվածով նախատեսված անհատական պաշտպանության միջոցների ցանկը, դրանց կիրառման դեպքերն ու կարգը, ինչպես նաև սանիտարահամաճարակային անվտանգության կանոնները սահմանվում են առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարի կողմից՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով:

4. Սույն հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված միջոցառումների ենթակա անձը տեղեկացվում է այն ախտանիշների մասին, որոնց առկայության հիմքով կատարվում է համապատասխան միջոցառումը, իսկ հոսպիտալացման դեպքում նաև այն վայրի մասին, որտեղ կատարվելու է հոսպիտալացումը: Անձի պահանջով հոսպիտալացում իրականացնողը պարտավոր է այդ մասին անհապաղ տեղեկացնել նրա ընտրած անձին:

5. Անձի՝ սույն հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված միջոցառումներից (բացառությամբ իմունականխարգելման) հրաժարվելու դեպքում դրանք իրականացվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

6. Սույն հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով սահմանված դեպքերում ժամանակավոր մեկուսացման նկատմամբ ենթակա են կիրառման սույն օրենքի 20.8-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված երաշխիքները:

7. Վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների, թունավորումների առաջացման և տարածման, կանխման ու վերացման նպատակով զինված ուժերի, ոստիկանության զորքերի և սահմանապահ զորքերի զորամասերում «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» օրենքով սահմանված սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումները կարող են իրականացվել պաշտպանության բնագավառում պետական լիազոր մարմնի, Ոստիկանության կամ Ազգային անվտանգության ծառայության կողմից:

Հոդված 20.2. Կարանտին սահմանելը

1. Վարակիչ հիվանդությունների՝ Հայաստանի Հանրապետության տարածք ներբերման (ներթափանցման), դրանց ծագման ու տարածման վտանգի, բռնկումների, համաճարակների առաջացման, ինչպես նաև դրանց հետևանքով արտակարգ իրավիճակ առաջանալու դեպքերում կարող է սահմանվել կարանտին:

2. Կարանտինը վարակիչ հիվանդությունների բռնկումները, համաճարակները տեղայնացնող, վերացնող, վարակի օջախները մեկուսացնող և վարակի հետագա տարածումը, վարակիչ հիվանդությունների ներբերումը (ներթափանցումը) կանխող ռեժիմ է, որը սահմանվում է Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում կամ դրա առանձին տարածքներում (հասցեներում):

3. Կարանտին սահմանելու մասին որոշումը լիազոր մարմնի առաջարկությամբ կայացնում է՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում կամ պետական սահմանի անցման կետում

կամ համաճարակի (կարանտինային) գոտին երկու կամ ավելի մարզ (ներառյալ՝ մեկ կամ ավելի մարզեր և Երևան քաղաքը) ներառելու դեպքում, այդ թվում՝ արտակարգ իրավիճակի հիմք հանդիսացող կարանտինի դեպքերում.

2) մարզպետը՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան վարչատարածքային միավորում՝ կամ դրա առանձին տարածքում, այդ թվում տվյալ վարչատարածքային միավորում գտնվող կամ գործունեություն իրականացնող կազմակերպությունների (անկախ սեփականության կամ կազմակերպաիրավական ձևից) գտնվելու կամ գործունեության իրականացման վայրում.

3) Երևանի քաղաքապետը՝ Երևան քաղաքում կամ դրա առանձին տարածքում, այդ թվում Երևան քաղաքում գտնվող կամ գործունեություն իրականացնող կազմակերպությունների (անկախ սեփականության կամ կազմակերպաիրավական ձևից) գտնվելու կամ գործունեության իրականացման վայրում.

4. Կարանտին սահմանելու մասին որոշման մեջ, ի թիվս այլնի, նշվում են՝

1) կարանտին սահմանելու հիմքերը,

2) կարանտինային գոտու (համաճարակի գոտու)՝ վարակի օջախի սահմանները,

3) կարանտին սահմանելու ժամկետը,

4) անհատական պաշտպանության միջոցների օգտագործման պահանջը,

5) անհրաժեշտ կանխարգելիչ, հակահամաճարակային և սահմանափակող միջոցառումների ցանկը, սահմանափակող միջոցառումների կիրառման կարգը, դրանց կիրառման ժամկետը, կազմակերպումն ու իրականացումն ապահովելու համար պատասխանատու մարմինները՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

5. Լիազոր մարմինը, գնահատելով սույն օրենքի 20.1-ին հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով սահմանված կարգով ստացված տեղեկատվությունը, հիվանդության հարուցիչի ախտածնությունը, տարածման առանձնահատկությունները, տարածքի բնական-աշխարհագրական պայմանները՝ հիվանդության արմատավորման

տեսակետից, կարանտին սահմանելու և անհրաժեշտ սահմանափակող միջոցառումներ կիրառելու մասին առաջարկություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության Կառավարություն կամ համապատասխան մարզպետին կամ Երևանի քաղաքապետին:

6. Կարանտին սահմանելու մասին որոշումը կայացվում է ~~լիազոր մարմնի կողմից~~ համապատասխան առաջարկությունը լիազոր մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարություն կամ համապատասխան մարզպետին կամ Երևանի քաղաքապետին ներկայացնելուց հետո 24 ժամվա ընթացքում: Սահմանված ժամկետում որոշում չկայացվելու դեպքում անձանց ժամանակավոր մեկուսացումը վերացվում է:

Հոդված 20.3. Կարանտին սահմանվելու դեպքում կիրառվող սահմանափակող միջոցառումները

1. Կարանտին սահմանվելու դեպքում, ի թիվս 20.1-ին հոդվածի 2-րդ մասում նշված միջոցառումների, կարող են կիրառվել հետևյալ սահմանափակող միջոցառումները.

1) համաճարակի (կարանտինային) գոտում մուտքի և ելքի հատուկ ռեժիմի սահմանում.

2) «Պետական սահմանի մասին» օրենքի 16-րդ հոդվածով նախատեսված պետական սահմանով հաղորդակցության ժամանակավոր դադարեցում կամ սահմանափակում.

3) անձանց ազատ տեղաշարժվելու իրավունքի և տրանսպորտային միջոցների տեղաշարժման սահմանափակումներ.

4) օբսերվացիա.

5) ինքնամեկուսացում.

6) մեկուսացում:

3. Սույն հոդվածով սահմանված միջոցառումները կիրառվում են վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու, դրանց հետևանքները վերացնելու, անձանց և հանրության առողջության պահպանման նպատակներով և պետք է համաչափ լինեն այդ նպատակներին: Կարանտին սահմանվելու դեպքում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գործողությունները պետք է համարժեք լինեն կարանտին սահմանելու հիմք հանդիսացած հանգամանքներով պայմանավորված իրավիճակին:

4. Սույն հոդվածով սահմանված միջոցառումների կիրառումը չի կարող խոչընդոտել Ազգային ժողովի, Սահմանադրական դատարանի, դատարանների, Մարդու իրավունքների պաշտպանի, զինված ուժերի, ոստիկանության զորքերի և սահմանապահ զորքերի բնականոն գործունեությունը:

5. Արտակարգ իրավիճակ առաջացնող համաճարակով պայմանավորված կարանտին սահմանվելու դեպքում բնակչության պաշտպանությունը, կիրառվող այլ միջոցառումների ցանկը, այդ միջոցառումների կազմակերպման և իրականացման կարգն ու առանձնահատկությունները սահմանվում են «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքով:

Հոդված 20.4. Համաճարակի գոտում մուտքի և ելքի հատուկ ռեժիմ սահմանելը

1. Կարանտին սահմանելու մասին որոշմամբ մուտքի և ելքի հատուկ ռեժիմ սահմանված լինելու դեպքում հատուկ ռեժիմի իրականացումն ապահովելու համար կարող են տեղադրվել հատուկ անցակետեր և բժշկական զննության իրականացման կետեր:

2. Անցակետերում և բժշկական զննման կետերում անվտանգության և ռեժիմի պահպանությունն ապահովում է Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված անվտանգության և ռեժիմի պահպանությանը կարող են ներգրավվել նաև լիազոր մարմնի ներկայացուցիչները,

Տեսչական մարմինը, տեղական ինքնակառավարման մարմինները, Ազգային անվտանգության ծառայությունը և արտակարգ իրավիճակների բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը:

Հոդված 20.5. Անձանց ազատ տեղաշարժվելու իրավունքի և տրանսպորտային միջոցների տեղաշարժման սահմանափակումներ

1. Կարանտին սահմանելու մասին որոշմամբ կարող են կիրառվել անձանց ազատ տեղաշարժվելու իրավունքի և տրանսպորտային միջոցների տեղաշարժման հետևյալ սահմանափակումները.

1) տեղաշարժվելու իրավունքի սահմանափակում որոշակի տարածքի սահմաններում.

2) անհատական պաշտպանության միջոցների առկայություն կամ կիրառություն և սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների պահպանում.

3) բնակության վայրի բնակելի տարածքից դուրս գտնվելիս և տեղաշարժվելիս անձի մոտ անձը հաստատող փաստաթղթի առկայություն.

4) անձնական օգտագործման մարդատար և բեռնատար տրանսպորտային միջոցներում, կանոնավոր և ոչ կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցներում, մարդատար-տաքսի ավտոմոբիլներում, հանրային տրանսպորտում անհատական պաշտպանության միջոցների առկայություն կամ կիրառություն և սանիտարահամաճարակային կանոնների պահպանում, ուղևորների թվաքանակի սահմանափակում, ինչպես նաև սույն կետով սահմանված սահմանափակումների կիրառման նկատմամբ ~~վերահսկողության~~հսկողության նպատակով տրանսպորտային միջոցների զննում:

2. Սույն հոդվածով նախատեսված միջոցառումների կիրառման նկատմամբ ~~վերահսկողությունն~~հսկողությունն իրականացնում և սահմանափակումների

խախտման համար պատասխանատվության միջոցները կիրառում է Ոստիկանությունը:

Հոդված 20.6. Օբսերվացիան

5. Օբսերվացիան բժշկական զննության, համաճարակաբանական դիտարկման, կանխարգելիչ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների համալիր է, որը կիրառվում է որոշակի ժամանակահատվածով վարակիչ հիվանդություններով հիվանդների հետ անմիջական շփված (կոնտակտավոր)՝ մեկուսացված, ինքնամեկուսացված, համաճարակային գոտի մուտք գործող և դուրս եկող, վարակիչ հիվանդությունների տեսակետից ~~անապահով~~անբարենպաստ երկրներից Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործող հիվանդության կասկածով անձանց նկատմամբ:

6. Օբսերվացիայի շրջանակներում անձի՝ ~~իր համաձայնությամբ~~ բժշկական հետազոտության ենթարկվելուց հրաժարվելու դեպքում, այն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված դատական կարգով:

7. Եթե օբսերվացիայի արդյունքներով անձի մոտ հաստատվում է վարակիչ հիվանդության առկայությունը, ապա նրա նկատմամբ կիրառվում է հոսպիտալացում՝ սույն օրենքով սահմանված դեպքերում և կարգով կամ հրահանգվում է ինքնամեկուսանալ՝ սույն օրենքի 20.7-րդ հոդվածով սահմանված կարգով:

8. Օբսերվացիայի իրականացման կարգի մանրամասները սահմանվում են առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով:

Հոդված 20.7. Ինքնամեկուսացումը

1. Ինքնամեկուսացումը ~~կասկածելի~~հնարավոր վարակակիր, կոնտակտավոր անձանց, ինչպես նաև վարակիչ հիվանդությունների հարուցիչներ կրողների առանձնացումն է իր մշտական բնակության կամ իր նախընտրությամբ մեկ այլ վայրում՝ որոշակի ժամանակահատվածում այլ անձանց հետ անմիջական շփումը սահմանափակելու և վարակի տարածումը կանխելու նպատակով:

2. Ինքնամեկուսացման ենթակա յուրաքանչյուր անձ իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է ինքնամեկուսացման պատճառների, բժշկական խորհրդատվության մատչելիության իրավունքի և իր պարտականությունների մասին:

3. Անձի նկատմամբ ինքնամեկուսացումը կիրառվում է՝ սույն օրենքով նախատեսված ~~դեպքերում Կառավարության որոշմամբ սահմանված~~ կարգով: Ինքնամեկուսացման հրահանգը տրվում է առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի կամ Տեսչական մարմնի անունից՝ համապատասխան մարմնի ղեկավարի կողմից լիազորված պաշտոնատար անձի բանավոր կարգադրությամբ, իսկ հասցեատիրոջ բանավոր կամ գրավոր պահանջով ենթակա է գրավոր ձևակերպման ոչ ուշ, քան պահանջն ստանալուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

4. Պաշտպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի, ոստիկանության զորքերի, սահմանապահ զորքերի զինծառայողներին (աշխատակիցներին) ինքնամեկուսացման հրահանգը կարող է տրվել համապատասխանաբար պաշտպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի, Ոստիկանության կամ Ազգային անվտանգության ծառայության անունից՝ նրանց ղեկավարի կողմից լիազորված պաշտոնատար անձանց բանավոր կարգադրությամբ, իսկ հասցեատիրոջ բանավոր կամ գրավոր պահանջով ենթակա է գրավոր ձևակերպման ոչ ուշ, քան պահանջն ստանալուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

5. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ինքնամեկուսացման հրահանգը կարող է կարանտին սահմանելու որոշմամբ սահմանված դեպքերում կիրառվել նաև Հայաստանի Հանրապետություն մուտքի դեպքում:

6. Ոստիկանությունը ~~վերահսկողություն~~հսկողություն է իրականացնում ինքնամեկուսացված անձանց տրված հրահանգի պահանջների կատարման նկատմամբ՝ բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի: Ոստիկանությունը, սույն մասով սահմանված գործառույթներն իրականացնելիս անհրաժեշտության դեպքում կարող է դիմել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին: Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերում ~~վերահսկողությունն~~հսկողությունն իրականացվում է պաշտպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի, Ոստիկանության կամ Ազգային անվտանգության ծառայության կողմից:

Հոդված 20.8. Մեկուսացումը

1. Մեկուսացումը ~~կասկածելի~~հնարավոր վարակակիր, կոնտակտավոր անձանց, ինչպես նաև վարակիչ հիվանդությունների հարուցիչներ կրողների առանձնացումն է լիազոր մարմնի որոշմամբ նախատեսված վայրում՝ որոշակի ժամանակահատվածով այլ անձանց հետ անմիջական շփումը բացառելու և վարակի տարածումը կանխելու նպատակով:

2. Մեկուսացման ենթակա յուրաքանչյուր անձ իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է մեկուսացման պատճառների, բժշկական խորհրդատվության մատչելիության իրավունքի և իր պարտականությունների մասին: Մեկուսացման ենթարկված անձի պահանջով մեկուսացում կիրառող մարմինը պարտավոր է անձի մեկուսացման մասին անհապաղ տեղեկացնել նրա ընտրած անձին:

3. Մեկուսացման հրահանգը տրվում է առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի կամ Տեսչական մարմնի անունից՝

համապատասխան մարմնի ղեկավարի կողմից լիազորված պաշտոնատար անձի գրավոր հրահանգով:

4. Պաշտպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի, ոստիկանության զորքերի, սահմանապահ զորքերի զինծառայողներին (աշխատակիցներին) մեկուսացման հրահանգը կարող է տրվել համապատասխանաբար պաշտպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի, Ոստիկանության կամ Ազգային անվտանգության ծառայության անունից՝ նրանց ղեկավարի կողմից լիազորված պաշտոնատար անձանց գրավոր հրահանգով:

5. Ոստիկանությունը ~~վերահսկողություն~~հսկողություն է իրականացնում մեկուսացված անձանց տրված հրահանգի պահանջների կատարման նկատմամբ՝ բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի: Ոստիկանությունը, սույն մասով սահմանված գործառույթներն իրականացնելիս անհրաժեշտության դեպքում կարող է դիմել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին: Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերում ~~վերահսկողությունն~~հսկողությունն իրականացվում է պաշտպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի, Ոստիկանության կամ Ազգային անվտանգության ծառայության կողմից:

6. Անձի նկատմամբ մեկուսացումը կիրառվում է այն դեպքում, երբ անձին հրահանգվել է ինքնամեկուսանալ, սակայն անձը հրաժարվել է կամ երբ անձը խախտել է ինքնամեկուսացման հրահանգով նախատեսված կանոնները, ինչպես նաև սանիտարահամաճարակային անվտանգության նորմերով նախատեսված հիմքերի առկայության դեպքում:

7. Մեկուսացման դեպքում անձը արտակարգ իրավիճակների բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի կամ Հայաստանի Հանրապետության ոստիկանության ներկայացուցչի հսկողությամբ և առողջապահության բնագավառում

պետական կառավարման լիազոր մարմնի կամ Տեսչական մարմնի ներկայացուցչի ուղեկցությամբ տեղափոխվում է առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարի կողմից սահմանված մեկուսացման վայր՝ բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի:

8. Մեկուսացման վայրում անձի համար ապահովվում են սննդի, կեցության համար բավարար պայմաններ, բժշկական խորհրդատվություն: Անհրաժեշտության դեպքում՝ մեկուսացված անձի համար ապահովվում է բժշկական օգնություն և սպասարկում ստանալու հնարավորությունը:

9. Պաշտպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի, ոստիկանության զորքերի, սահմանապահ զորքերի զինծառայողների (աշխատակիցների) մեկուսացման դեպքում անձը պաշտպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի, Ոստիկանության կամ Ազգային անվտանգության ծառայության ներկայացուցիչների հսկողությամբ և ուղեկցությամբ տեղափոխվում է համապատասխանաբար պաշտպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարի, Ոստիկանության պետի կամ Ազգային անվտանգության ծառայության տնօրենի կողմից սահմանված մեկուսացման վայրեր:

Հոդված 20.9. Սահմանափակող միջոցառումների կիրառումն ապահովելու նպատակով անձանց տվյալների փոխանցումը

1. Սահմանափակող միջոցառումների կիրառման նկատմամբ ~~վերահսկողություն~~հսկողություն իրականացնելու նպատակով սահմանափակման ենթակա անձանց կարանտին սահմանելու հիմք հանդիսացող վարակիչ հիվանդության վերաբերյալ տվյալները էլեկտրոնային առողջապահության համակարգի միասնական օպերատորի կողմից փոխանցվում են Տեսչական մարմնին և Ոստիկանությանը:

Հոդված 20.10. Կարանտինի գործողության ժամկետը, երկարաձգումը և կարանտինի դադարումը

1. Կարանտինը սահմանվում է մինչև վեց ամիս ժամկետով:

2. Կարանտին սահմանելու հիմքերը չվերանալու դեպքում այն կարող է երկարաձգվել յուրաքանչյուր անգամ մինչև 6 ամիս ժամկետով՝ պահպանելով կարանտին սահմանելու սույն օրենքով սահմանված կարգը:

3. Կարանտինը դադարում է կարանտին սահմանելու մասին որոշման ժամկետը լրանալով կամ կարանտին սահմանելու մասին որոշման գործողությունը դադարեցվելու դեպքերում:

Հոդված 20.11. ~~**Հիվանդությունների միջազգային տարածման կանխարգելում**~~

~~1. Հայաստանի Հանրապետության տարածքում ապահովվում են Միջազգային Առողջապահական (բժշկա-սանիտարական) Կանոնների (այսուհետ՝ Կանոններ) պահանջները՝ ուղղված հիվանդությունների առաջացման և միջազգային տարածման կանխարգելմանը, որի համակարգումն իրականացվում է լիազոր մարմնի կողմից՝ որպես Կանոնների հարցերով ազգային համակարգող մարմին:~~

~~**Հոդված 20.12.**~~ **Կարանտին սահմանվելու դեպքում բնակչության բժշկական օգնության և սպասարկման կազմակերպումը**

2. Կարանտին սահմանվելու դեպքում բժշկական օգնության և սպասարկման լիցենզիա ունեցող կազմակերպությունները (անկախ սեփականության ձևից) բժշկական օգնությունը և սպասարկումը իրականացնում են՝ հիմք ընդունելով լիազոր մարմնի ղեկավարի հրամանները:

Հոդված 20.~~13~~12. Սույն գլխով նախատեսված ակտերի և գործողությունների (անգործության) բողոքարկումը

1. Կարանտինի պայմաններում սույն գլխով սահմանված միջոցառումների կիրառման շրջանակներում սույն գլխով նախատեսված մարմինների ակտերը ենթակա են անհապաղ կատարման, բացառությամբ կարանտին սահմանելու մասին որոշմամբ կիրառվող միջոցառումների խախտման դեպքում կայացված ակտերի: :

2. Կարանտինի պայմաններում սույն գլխով սահմանված միջոցառումների կիրառման շրջանակներում սույն գլխով նախատեսված մարմինների ակտերը, գործողությունները (անգործությունը) կարող են բողոքարկվել վարչական կարգով կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով: Սույն մասով նախատեսված բողոքարկումը չի կասեցնում համապատասխան ակտի կատարումը, բացառությամբ կարանտին սահմանելու մասին որոշմամբ կիրառվող միջոցառումների խախտման դեպքում կայացված ակտերի:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից հետո՝ անմիջապես:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍԱՆԻՏԱՐԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Կ-719-01.09.2020,04.09.2020-ՊԻ-011/1, Կ-719[1]-01.09.2020,04.09.2020-ՊԻ-011/1, Կ-719[2]-01.09.2020-ՊԻ-011/1, Կ-719[3]-01.09.2020,04.09.2020-ՊԻ-011/1, Կ-719[4]-01.09.2020,04.09.2020-ՊԻ-011/1, Կ-719[5]-01.09.2020-ՊԻ-011/1, Կ-719[6]-01.09.2020-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Կառավարություն	«Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության	Ոստիկանության կողմից իրականացվող վերահսկողություն տերմինը առաջարկվել է փոփոխել հսկողություն տերմինով:	Ընդունվել է:	Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է:

		ապահովման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծում (այսուհետ՝ Նախագիծ 1)			
2.	պատգամավոր Նարեկ Զեյնալյան	Նախագիծ 1	Նախագիծ 1-ի ամբողջ տեքստում «լիազոր մարմնի ղեկավարի» բառերը փոխարինել «լիազոր մարմնի» բառերով:	Չի ընդունվել: «Նորմատիվ իրվական ակտերի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասից բխում է, որ ենթաօրեսդրական ակտ կարող է ընդունել նաև նախարարը՝ լիազոր մարմնի ղեկավարը:	Հանձնաժողովն առաջարկությունը չի ընդունել:
3.	պատգամավոր Նարեկ Զեյնալյան	Նախագիծ 1	Նախահիծ 1-ի 3-րդ հոդվածով լրացվող 20.1-ին հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում «անապահով» բառը փոխարինել «անբարենպաստ» բառով:	Ընդունվել է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է:
4.	պատգամավոր Նարեկ Զեյնալյան	Նախագիծ 1	Նախահիծ 1-ի 3-րդ հոդվածով լրացվող 20.1-ին հոդվածի 2-րդ մասում լրացնել նոր 10-րդ կետ. «10) կոնտակտավորների հայտնաբերում»:	Չի ընդունվել: Նշված միջոցառումը իրականացվում է նույն մասում սահմնված այլ միջոցառումների շրջանակում:	Հանձնաժողովն առաջարկությունը չի ընդունել:
5.	պատգամավոր Նարեկ Զեյնալյան	Նախագիծ 1	Նախահիծ 1-ի 3-րդ հոդվածով լրացվող 20.1-ին հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետում հստակեցնել «իմունականխարգելման իրականացում» հասկացությունը:	Չի ընդունվել: Նախագծում կատարվել է հստակեցում, որպեսզի պարզ լինի որ քաղաքացիական դատավարության	Հանձնաժողովն առաջարկությունը չի ընդունել:

			Նախահիծ 1-ի 3-րդ հոդվածով լրացվող 20.1-ին հոդվածի 3-րդ մասի համաձայն «...կատարվում են համապատասխան միջոցառումներ...» Հստակեցնել իմունականխարգելումը պարտադիր է, թե՝ ոչ:	օրենսգրքով սահմանված կարգը չվերաբերի նաև իմունականխարգելմանը:	
6.	պատգամավոր Նարեկ Զեյնալյան	Նախագիծ 1	Նախահիծ 1-ի 3-րդ հոդվածով լրացվող 20.1-ին հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետում ֆիքսել, թե որ մարմինը և ում է ապահովում պաշտպանիչ միջոցներով: Նույն ձևակերպումն ավելացնել Նախագիծ 2-ով նախատեսվող 12-17-րդ հոդվածներում:	Չի ընդունվել: Նույն հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ նախատեսված անհատական պաշտպանության միջոցների ցանկը, դրանց կիրառման դեպքերն ու կարգը, ինչպես նաև սանիտարահամաճարակային անվտանգության կանոնները սահմանվում են առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարի կողմից՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով:	Հանձնաժողովն առաջարկությունը չի ընդունել:
7.	պատգամավոր Նարեկ Զեյնալյան	Նախագիծ 1	Նախահիծ 1-ի 3-րդ հոդվածով լրացվող 20.2-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն «կարանտին սահմանելու որոշումը կայացվում է լիազոր մարմնի կողմից»: Քանի որ կարանտինը	Ընդունվել է: Նախագծում կատարվել է շարահյուսական փոփոխություն:	Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է:

			ենթադրում է նաև որոշակի սահմանափակող միջոցառումներ, առաջարկվում է կարանտին սահմանելու մասին որոշումը կայացնել կառավարության կողմից:		
8.	պատգամավոր Նարեկ Զեյնալյան	Նախագիծ 1	Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 20.6-րդ հոդվածի 1-ին մասում հստակեցնել <<կոնտակտավոր>> հասկացությունը: Այն սահմանել հետևյալ կերպ. <<տվյալ հիվանդության ինկուբացիոն շրջանի ժամանակահատվածում վարակակրի հետ անմիջական շփված անձ>>:	Ընդունվել է:	Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է:
9.	պատգամավոր Նարեկ Զեյնալյան	Նախագիծ 1	Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 20.7-րդ հոդվածի 2-րդ մասում հանել <<իր համաձայնությամբ>> բառերը:	Ընդունվել է:	Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է:
10.	պատգամավոր Նարեկ Զեյնալյան	Նախագիծ 1	Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 20.6-րդ հոդվածի 4-րդ մասում <<կարգի մանրամասները>> բառերը փոխարինել <<կարգը>> բառով:	Չի ընդունվել: Կարգը արդեն իսկ սահմանվում է օրենքով, այլ բան է կարգի մանրամասները, որոնք սահմանվում են ենթաօրենսդրական ակտով:	Հանձնաժողովն առաջարկությունը չի ընդունել:
11.	պատգամավոր Նարեկ Զեյնալյան	Նախագիծ 1	Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 20.7-րդ հոդվածում առաջարկում եմ պարտադիր հոսպիտալացման և մեկուսացման (ինքնամեկուսացման) կարգը սահմանել օրենքի հավելվածով, հաշվի առնելով ՀՀ	Չի ընդունվել: Օրենքով նախատեսվում է կարգը, մասնավորապես, նշված հոդվածում նշվել են ինքնամեկուսացման թե՛ դեպքը, թե՛	Հանձնաժողովն առաջարկությունը չի ընդունել:

			Սահմանադրության 27-րդ հոդվածի առաջին մասի պահանջը:	իրականացման կարգը:	
12.	պատգամավոր Նարեկ Զեյնալյան	Նախագիծ 1	Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 20.7-րդ հոդվածի 2-րդ մասում առաջարկում եմ հաստակեցնել թե, ինչ եղանակով է տեղեկացվում ինքնամեկուսացման ենթակա անձը:	Չի ընդունվել: Նշված մասում ամրագրվել է Սահմանադրությամբ ամրագրված երաշխիքը, իսկ տեղեկացման յուրաքանչյուր դեպք կարող է տարբեր լինել՝ կախված հիվանդության բնույթից:	Հանձնաժողովն առաջարկությունը չի ընդունել:
13.	պատգամավոր Նարեկ Զեյնալյան	Նախագիծ 1	Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 20.7-րդ հոդվածի 3-րդ մասում առաջարկում եմ <<բանավոր>> բառը փոխարինել <<գրավոր>> բառով:	Չի ընդունվել: Օբյեկտիվորեն առկա չէ հնարավորություն ցանկացած դեպքում ինքնամեկուսացման հրահանգը գրավոր տալու՝ ի տարբերություն մեկուսացման, սակայն հոդվածով նախատեսվել է երաշխիք, որ անձի պահանջով այն կարող է ձևակերպվել գրավոր:	Հանձնաժողովն առաջարկությունը չի ընդունել:
14.	պատգամավոր Նարեկ Զեյնալյան	Նախագիծ 1	Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 20.7-րդ հոդվածի 3-րդ մասը առաջարկվում է խմբագրել հետևյալ կերպ. <<Մեկուսացման կարգը սահմանվում է սույն օրենքի հավելվածով: Հիմք ընդունելով Սահմանադրության 27-րդ հոդվածը՝ մեկուսացված անձն իրազեկվում է իր իրավունքների,	Չի ընդունվել: Օրենքով նախատեսվում է կարգը, մասնավորապես, նշված հոդվածում նշվել են ինքնամեկուսացման թե՛ դեպքը, թե՛ իրականացման կարգը:	Հանձնաժողովն առաջարկությունը չի ընդունել:

			պարտականությունների, մեկուսացման կանոնները խախտելու հետևանքով առաջացող հնարավոր պատասխանատվության և մեկուսացման ժամկետի մասին: Իրազեկման թերթիկի ձևը, իրազեկման կարգը հաստատում է առողջապահության բնագավառի պետական լիազոր մարմինը:>>:		
15.	պատգամավոր Նարեկ Զեյնալյան	Նախագիծ 1	Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 20.7-րդ հոդվածի 6-րդ մասը լրացնել հետևյալ նախադասությամբ. <<Ոստիկանությունը, սույն մասով սահմանված գործառույթներն իրականացնելիս, անհրաժեշտության դեպքում, կարող է դիմել պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմիններին:>>: Վերահսկողությունը նաև կարող է իրականացվել հատուկ ծրագրային ապահովման միջոցով:	Չի ընդունվել: Նշված հոդվածի նույն մասով նախատեսված է, որ Ոստիկանությունը անհրաժեշտության դեպքում կարող է դիմել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին:	Հանձնաժողովն առաջարկությունը չի ընդունել:
16.	պատգամավոր Նարեկ Զեյնալյան	Նախագիծ 1	Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 20.7-րդ հոդվածը լրացնել նոր մասով. <<7) Եթե ինքնամեկուսացման մեջ գտնվողը չի կարող հոգալ իր կենսապահովման նվազագույն պահանջները, ապա դա իրականացվում է Սոցիալական	Չի ընդունվել: Նման դեպքում, հաշվի առնելով հնարավոր ինքնամեկուսացման դեպքերի քանակը և ծավալները, հնարավոր չէ օրենքով նախատեսել պարտադիր ապահովման պահանջ:	Հանձնաժողովն առաջարկությունը չի ընդունել:

			բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի կողմից:	Փոխարենը, կառավարությունը ըստ անհրաժեշտության յուրաքանչյուր դեպքում կարող է հոգալ նաև ինքնամեկուսացվածների կենսապահովման պահանջները:	
17.	պատգամավոր Նարեկ Զեյնալյան	Նախագիծ 1	Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 20.8-րդ հոդվածի 2-րդ մասում հստակեցնել՝ որոնք են մեկուսացված անձի պարտականությունները և որ մարմնի կողմից են սահմանվում դրանք:	Չի ընդունվել: Նշված պայմաններում ապահովված են բոլոր սահմանադրական փրաշխիքները. մասնավորապես՝ անձին կտեղեկացվի մեկուսացման վայրի մասին, ինչպես նաև մեկուսացման ժամանակ պայմանների մասին, որոնք բոլորը չէ, որ օրենքով են սահմանվում, ուստի հնարավոր չէ նաև օրենքով նախատեսենք պայմանները, որոնց պետք է ծանոթացնել: Միաժամանակ, անձին կտեղեկացվի նաև պայմանները չպահպանելու դեպքում վարչական և քրեական պատասխանատվության մասին:	Հանձնաժողովն առաջարկությունը չի ընդունել:
18.	պատգամավոր Նարեկ Զեյնալյան	Նախագիծ 1	Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 20.12-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ կերպ.	Չի ընդունվել: Համապատասխան հղում պարունակող նորմը	Հանձնաժողովն առաջարկությունը չի ընդունել:

			<<Արտակարգ իրավիճակի հիմքով կարանտին սահմանելու դեպքում բնակրության բժշկական օգնությունը և սպասարկումը իրականացվում <<ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ օրենքով սակմանված կարգով>>:	նախատեսված է «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքի 17.2-րդ հոդվածում	
19.	պատգամավոր Նարեկ Զեյնալյան	Նախագիծ 1	Նախագծի ամբողջ տեքստում <<լիազոր մարմնի ղեկավարի>> բառերը փոխարինել <<լիազոր մարմնի>> բառերով:	Չի ընդունվել	Հանձնաժողովն առաջարկությունը չի ընդունել:
20.	պատգամավոր Նարեկ Զեյնալյան	Նախագիծ 1	Նախագծի 12-րդ հոդվածում ավելացնել նոր կետ Է) հայտարարում է արտակարգ իրավիճակ Արտակարգ իրավիճակը ով և ինչպես է ֆիքսում	Չի ընդունվել: Նշվածը իրենից ենթադրում է ամբողջ օրենքի կառուցակարգի փոփոխություն: Միաժամանակ Արտակարգ իրավիճակների նախարարության կողմից նշված խնդրի լուծման համար մշակվում է օրենսդրական փաթեթ:	Հանձնաժողովն առաջարկությունը չի ընդունել:
21.	պատգամավոր Նարեկ Զեյնալյան	Նախագիծ 1	Նախագծի 11-րդ հոդվածով լրացվող 17.2-րդ հոդվածի 2-րդ մասում արձանագրված << Հանրության համար վտանգավոր վարակիչ հիվանմդությունների>> ցանկ առկա չէ:	Չի ընդունվել: Նշվածը դուրս է սույն օրենսդրական փաթեթի առարկայից:	Հանձնաժողովն առաջարկությունը չի ընդունել:
22.	պատգամավոր Նարեկ Զեյնալյան	Նախագիծ 1	Նախագծի 11-րդ հոդվածով լրացվող 17.3-րդ համարակալումով հոդված առկա չէ:	Ընդունվել է	Հանձնաժողովը առաջարկությունն ընդունել է:

			Նախագծի 11-րդ հոդվածով լրացվող 17.4-րդ հոդվածով սահմանված Պարտադիր հոսպիտալացման և մեկուսացման (ինքնամեկուսացման) կարգն անհրաժեշտ է սահմանել օրենքի հավելվածով, հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի առաջին մասի պահանջը:		
23.	պատգամավոր Նարեկ Զեյնալյան	Նախագիծ 1	Նախագծի 11-րդ հոդվածով լրացվող 17.4-րդ հոդվածի 1-ին մասում առաջարկում ենք նախատեսել Հատուկ կարգ, այլ ոչ թե արգելք և սահմանափակում: Առաջարկվում է <<արգելքներ և սահմանափակումներ>> բառերը փոխարինել <<հատուկ կարգ>> բառերով:	Չի ընդունվել: Նշված հոդվածում նախատեսված միջոցառումները իրենց բնույթով սահմանափակումներ են:	Հանձնաժողովն առաջարկությունը չի ընդունել:
24.	Բարգավաճ Հայաստան խմբակցություն	Նախագիծ 1	Առաջարկվում է «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով լրացվող հոդված 20.1-ի 1-ին մասում 5-րդ մասից հանել «վարակիչ հիվանդությունների՝ լիազոր մարմնի ղեկավարի կողմից սահմանված ախտանիշներին կամ առողջական վիճակին համապատասխանող անձինք (այսուհետ՝ կասկածելի անձինք),» բառերը.	Ընդունվել է:	Հանձնաժողովն առաջարկությունը ընդունել է:

25.	Բարգավաճ Հայաստան խմբակցություն	Նախագիծ 1	Առաջարկվում է «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով լրացվող հոդված 20.1-ի 1-ին մասում 7-րդ մասից հանել «կասկածելի, ինչպես նաև» բառերը.	Ընդունվել է մասնակի: Նախագծում շտկվել է հասկացությունը	Հանձնաժողովն ընդունվել է մասնակի:
26.	Բարգավաճ Հայաստան խմբակցություն	Նախագիծ 1	Առաջարկվում է «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով լրացվող հոդված 20.1-ի 1-ին մասում 8-րդ մասից հանել «կասկածելի անձանց, ինչպես նաև» բառերը.	Ընդունվել է մասնակի Նախագծում շտկվել է հասկացությունը:	Հանձնաժողովն ընդունվել է մասնակի:
27.	Բարգավաճ Հայաստան խմբակցություն	Նախագիծ 1	Առաջարկվում է «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքի նախագծի 20.3 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում՝ «անձանց» բառից հետո լրացնել «ազատ գործելու» բառերը.	Չի ընդունվել: Նախագծում անհատական պաշտպանության միջոցները նախատեսվել են որպես առանձին միջոցառում, որը համաձայն Սահմանադրության 39-րդ հոդվածի օրենքով նախատեսված պարտականություն է	Հանձնաժողովն առաջարկությունը չի ընդունել:
28.	Բարգավաճ Հայաստան խմբակցություն	Նախագիծ 1	Առաջարկվում է «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքի նախագծի 20.5	Չի ընդունվել: Նախագծում անհատական պաշտպանության միջոցները նախատեսվել	Հանձնաժողովն առաջարկությունը չի ընդունել:

			հոդվածում վերնագրում և 1-ին մասում «անձանց» բառից հետո լրացնել «ազատ գործելու» բառերը.	են որպես առանձին միջոցառում, որը համաձայն Սահմանադրության 39-րդ հոդվածի օրենքով նախատեսված պարտականություն:	
29.	Բարգավաճ Հայաստան խմբակցություն	Նախագիծ 1	Առաջարկվում է «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքի նախագծի 20.5 հոդվածում լրացնել նոր 3-րդ մաս. «3. Հայաստանի Հանրապետությունում գտնվող ֆիզիկական և իրավաբանական անձինք պարտավոր են պահպանել և կատարել կարանտին սահմանելու մասին որոշմամբ սահմանված անհատական պաշտպանության միջոցների օգտագործման պահանջը:».	Չի ընդունվել: «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքում նշվում է անհատական պաշտպանության միջոցների կիրառման պարտադիրության պահանջի կարգը	Հանձնաժողովն առաջարկությունը չի ընդունել:
30.	Բարգավաճ Հայաստան խմբակցություն	Նախագիծ 1	Առաջարկվում է «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքի նախագծի 20.7 հոդվածում լրացնել նոր 7-րդ մաս. «7. Ինքնամեկուսացման վայրում անձի համար ապահովվում են սննդի, կեցության համար բավարար պայմաններ, բժշկական խորհրդատվություն: Անհրաժեշտության դեպքում՝ ինքնամեկուսացված անձի համար	Ընդունվել է մասնակի: Նման դեպքում, հաշվի առնելով հնարավոր ինքնամեկուսացման դեպքերի քանակը և ծավալները, հնարավոր չէ օրենքով նախատեսել պարտադիր ապահովման պահանջ: Փոխարենը, կառավարությունը ըստ անհրաժեշտության յուրաքանչյուր դեպքում	Հանձնաժողովն առաջարկությունը ընդունել է մասնակի:

			ապահովվում է բժշկական օգնություն և սպասարկում ստանալու հնարավորությունը:».	կարող է հոգալ նաև ինքնամեկուսացվածների կենսաապահովման պահանջները:	
31.	Բարգավաճ Հայաստան խմբակցություն	Նախագիծ 1	Առաջարկվում է «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքի նախագծից հանել 20.11-րդ հոդվածը.	Ընդունվել է:	Հանձնաժողովը առաջարկությունն ընդունել է:
32.	Բարգավաճ Հայաստան խմբակցություն	Նախագիծ 1	Առաջարկվում է ոչ միայն իրավունքի սահմանափակումները, այլև դրա այդ թվուում անհատական միջոցների կիրառման և օգտագործման կարգը նույնպես սահմանել օրենքով՝ Սահմանադրությամբ սահմանված իրավունքների սահմանափակման օրինական ձևը պահպանելու համար.	Չի ընդունվել: Համաձայն մարդու իրավունքների մասին Սահմանադրության նորմերի՝ օրենքով սահմանվում են այդ իրավունքների սահմանափակման դեպքերը	Հանձնաժողովն առաջարկությունը չի ընդունել:
33.	Բարգավաճ Հայաստան խմբակցություն	Նախագիծ 2	Առաջարկվում է «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 17.5-րդ հոդվածի 1-ին, 4-րդ և 5-րդ մասերից հանել «կամ արգելքների» բառերը.	Չի ընդունվել: Նշված մասերում արգելքը վերաբերում է միայն հանրային միջոցառումների, այլ ոչ հավաքներին	Հանձնաժողովն առաջարկությունը չի ընդունել:
34.	Բարգավաճ Հայաստան խմբակցություն	Նախագիծ 1	Առաջարկվում է նախագծերի փաթեթից հանել ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը, քանի որ նախագծով հետապնդվող խնդիրը ամբողջությամբ լուծված է ՀՀ քրեական օրենսգրքի 124.1-րդ	Չի ընդունվել: Քրեական օրենքսգրքի 124.1 հոդվածը վերաբերում է միայն Նոր կորոնավիրուսային վարակին, սակայն մեր առաջարկած նախագիծը	Հանձնաժողովն առաջարկությունը չի ընդունել:

			հոդվածով.	վերաբերում է առհասարակ վարակիչ հիվանդություններին: Միևնույն ժամանակ հաշվի առնելով այն հանգամանքը, որ առաջարկված հանցակազմի դիսպոզիցիայում առկա գործողությունները կատարվում են մեղքի դիտավորյալ ձևով և հանրորեն վտանգավոր հետևանքներ կարող են առաջացնել ուստի անհրաժեշտ է նախատեսել քրեական օրենսգրքով:	
35.	Բարգավաճ Հայաստան խմբակցություն	Նախագիծ 1	Առաջարկվում է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. «1. Կարանտին սահմանելու մասին որոշմամբ սահմանված համաճարակի (կարանտինային) գոտի մուտքի և ելքի հատուկ ռեժիմը խախտելը՝ առաջացնում է նախազգուշացում, իսկ կրկնվելու դեպքում՝ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև յոթանասունապատիկի չափով:	Չի ընդունվել: Նշված զանցակազմերը նախատեսելիս հաշվի են առնվել դրանց ծանրությունն ու հնարավոր հետևանքները:	Հանձնաժողովն առաջարկությունը չի ընդունել:

			2. Կարանտինի ընթացքում անձանց ազատ տեղաշարժվելու իրավունքի կամ տրանսպորտային միջոցների տեղաշարժման սահմանափակումները խախտելը, ինչպես նաև դրանց զննման իրականացմանը խոչընդոտելը՝ առաջացնում է նախազգուշացում, իսկ կրկնվելու դեպքում՝ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով: 3. Կարանտինի ընթացքում տնտեսական գործունեության առանձին տեսակների իրականացման և ծառայությունների մատուցման, ինչպես նաև տնտեսական գործունեությամբ չզբաղվող այլ կազմակերպությունների գործունեության սահմանափակումները խախտելը՝ առաջացնում է նախազգուշացում, իսկ կրկնակի դեպքում՝ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով: 4. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված արարքը վարչական տույժ նշանակելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսունապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով:		

			5. Կարանտինի ընթացքում հավաքներ կամ հանրային միջոցառումներ կազմակերպելու կամ անցկացնելու սահմանափակումները խախտելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից մինչև հինսապատիկի չափով: 6. Կարանտինի ընթացքում հավաքների կամ հանրային միջոցառումների մասնակցելու սահմանափակումները խախտելը առաջացնում է նախազգուշացնում, իսկ կրկնվելու դեպքում՝ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով: 7. 8. Կարանտինի ընթացքում կանոնավոր փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների սահմանափակումները խախտելը, ինչպես նաև դրանց զննման իրականացմանը խոչընդոտելը՝ առաջացնում է նախազգուշացում, իսկ կրկնվելու դեպքում՝ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով: 9. Կարանտինի ընթացքում մեկուսացման կամ ինքնամեկուսացման կանոնները խախտելը՝ առաջացնում է նախազգուշացում, իսկ կրկնվելու դեպքում՝ տուգանքի նշանակում՝		

			սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:»: 10. Կարանտին սահմանելու մասին որոշմամբ սահմանված անհատական պաշտպանության միջոցների օգտագործման պահանջը խախտելը՝ առաջացնում է նախազգուշացում, իսկ կրկնվելու դեպքում՝ տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով: 11. Կարանտինի ընթացքում կրթական հաստատությունների կողմից սահմանված միջոցառումները և սահմանափակումները խախտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրապատիկի չափով:»:		
36.	Բարգավաճ Հայաստան խմբակցություն	Նախագիծ 1	Առաջարկվում է «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով լրացվող հոդված 222.14-ում «տասնօրյա» բառը փոխարինել «մեկամսյա» բառով:	Ընդունվել է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է: